

մի համեստ ժողովրդական տուն կառուցանելու համար, ուր արուէին զուտ ժողովրդական ներկայացումներ և կազմակերպուէին ժողովրդական դասախօսութիւններ, սակայն քաղաքային վարչութիւնը միշտ էլ մնացել է ձեռնպահ և անտարբեր, կարծես Հաւլաբարը քաղաքից անջատ, նրա հետ կապ չունեցող վայր լինի: Եւ այսպիսի անտարբերութիւնը դէպի մի՞ կենսական խնդրի հետ ան- միջակոս կապ ունեցող 'հիմնարկութիւնը' անպայման դատապարտելի է:

Որքան մեծ շարժիչ և ոգելից խմբիչների գործածելը, նոյնքան և աւելի մեծ բարիք կարող է լինել և բարեբար ազդեցութիւն կունենայ Հաւլաբարում ժողովրդական տունը, որը ոչ միայն կը նպաստէ հաւաքարցու մտաւոր- բարոյական յառաջդիմութեան, այլև յետ կը կասեցնէ գինեաներից մոյն բազմաթիւ բարոյապէս վատնող ածան- բին. որոնք սպառնում են ապագայում այլասերել, այ- լանդակել իրենց չըջապատի մատաղ սերնդին:

Ապագայում այս ցաւալի դրութիւնից հաւաքար- ցուն ազատելու համար անհրաժեշտ է կառուցանել մի համեստ ժողովրդական տուն, որ իր մէջ պարունակէր զոնէ Զուբալովի Տան յարմարութիւնների մի քանորդը:

Եւ վերջապէս քաղաքային վարչութեան պարտաւա- նութիւնն է մտածել այդ մասին և յանուն իր խնամքին յանձնուած ժողովրդի մտաւոր-բարոյական կեանքի յառա- ջագիմութեան՝ օր առաջ ձեռնարկէ այդ հիմնարկութեան կառուցման:

Գ. Օջանեան

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՕԲԵԼԵԱՆԸ

Քաղաքիս ինտելիգենտ հասարակութիւնը պատրաս- տութիւն է տեսնում Պրոանդուն կերպով ամսոյս 19-ին մի երեկոյթ կազմել շքեղ տօնելու համար համազգային տառերի գիւտի 1500-ամեակի և ապագրութեան 400-ա- մեակի մեծ յօրեկանը: Տօնին աւելի վայելուչ կերպա- րանք տալու համար Աղէքսանդրապօլից հրաւիրել են երգիչ Նուգաճու թառիստ Գրիգոր Տալեանի խումբը: Այս երկրորդ անգամն է, որ այսպէս պատրաստութիւն- ներ են տեսնում այդ տօնի առիթով:

Ներկայումս գործի զլուխ կանգնած են բացի նախ- կին նախաձեռնող պարտնէրից նաև տեղիս քահանա- ները, որոնք աչխատում են դրական գեղարուեստական բաժինը աւելի ճոխ և բազմաբովանդակ կերպով ցուցա- դրել հետաքրքրուող հասարակութեան:

Տեղիս քահանաները բոլորն էլ գրեթէ ձեռնաս կրթուած մարդիկ են և երբ ուզեման կարող են մեծ բան կատարել եթէ գէթ համերայնութիւնը գերիշխող լինէր նրանց մէջ: Քահանաները այժմ պատրաստում են հրա- տարակել այդ նշանակալից տօնի օրը մի բալետային, բարեբաղդարար նրանց մի ժողովում ինչ վիճակուեց ներկայ գտնուել, որտեղ կարգում էին, քննում, քննողա-

տում Ալմանախի համար ընտիր զրուածքները, և ապա յանձնում ապագրութեան Պէտք է ասել, որ ամեն ոք էլ հասարակութիւնից կարող էր մասնակցել գրականների այդ ժողովին, ով ի հարկէ պատրաստած ունենար Վլի- մանախի համար մի գրաւոր աչխատութիւն:

Ահա այսպէս շուտով քաղաքումս տօնուկու է Հա- մազգային Մեծ Յօրեկանը և տայ Աստուած, որ փա- աւուր և շքեղ կատարուի այդ ազգային տօնը: Յուսալի է, որ լաւ պէտքէ անցնի, որովհետև այժմ վաճառական արուեստ դասակարգից մասնակցողներ կան հանդէսին, որոնք այնքան մօտ են համարել իրենց սրտին յօրեկա- նական տօնը, որ պատրաստակամութիւն են յայտնել մինչև անգամ ինչպէս լսեցիք, հարկաւոր ծախքը իրենք հոգալու և չթողնելու, որ տեղիս գրական-գեղարուեստա- կան ընկերութիւնը, որ նախաձեռնողն է եղել այս սուրբ գործին, զէֆիլիցիս ունենայ Առիթ կունենանք տօնակա- տարութեան մասին յետոյ յայտնել մեր կարծիքը:

Այս յօրեկանական տօնի առթիւ և զպրոցական Փօնդի համար թեմիս սրբազան առաջնորդը գնացել է հիւսիսային կովկասի քաղաքները՝ Նորին Սրբազնու- թիւնը ունէր հոյնպէս կատարելու կարևոր պաշտօնական գործեր իր այցելած վայրերում: Վշակ լրագրի խմբա- գրութիւնից յայտնած էր, որ իրրև թէ թեմիս սրբազան առաջնորդ Միթար եպիսկոպոսը հրաժարական է տուել պաշտօնից, գալիս եմ յայտնելու, որ միանգամայն սխալ է այդ անդեկութիւնը և ինչպէս ինչ յայտնի է սրբազանը հրաժարական չի տուել:

Վիճուտ

Աստրախան, 6 հոկտ.

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԻ ԿՕՏԱՐՈՒՄԸ ԷՋԱՄԱԾ- ՆՈՒՄ

(Քաղուած թերթերից)

Հոկտեմբերի 11-ին, ուրբաթ օրը զանազան վայրե- րից հաւեքուել էր մօտ 150 պատգամաւոր: Երեկոյեան Կաթողիկոսը ամբողջ միաբանութեան ուղեկցութեամբ հանդիսաւորապէս իջաւ Մայր Տաճար:

Ժամերգութիւնից յետոյ տեղի ունեցաւ պատգա- մաւորների խորհրդակցութիւն զպրոցական Փօնդի մա- սին: Որոշուեց, որ հասարակութիւնը մասնակցէ Փօնդի գործադրութեան կազմակերպութեանը: Բննուեցին զըպ- րոցական խնդիրներ:

Շաբաթ օրը տեղի ունեցաւ հանդիսաւոր թափօր Էջմիածնից Օշական, Կաթողիկոսի, վանքի միաբանու- թեան, Ճեմարանի աշակերտութեան և ուսուցչութեան, պատգամաւորների և խումբ բազմութեան մասնակցու- թեամբ: Տպաւորութիւնը վեճ էր:

Օշականի եկեղեցում տեղի ունեցած պատարագից յետոյ հանդիսաւոր հոգեհանգիստ կատարուեց ս. Մես- րոպի գերեզմանի վրայ, որով բացուեցան հանդէսները:





Տեղի ունեցան 30 շնորհաւորականներ:

Թափօրը նոյն կարգով վերադարձաւ Էջմիածին, ուր տեղի ունեցաւ հանդիսաւոր ճաշ: Ետն կենացներ խմուեցին:

Երեկոյան բանաստեղծ Կարապետ եպիսկոպոսը հայոց հին գրականութեան մասին: Գահլիճը լի էր սուկրեցիքներով:

Վանքի գաւիթը լուսալաւաւած էր: Նուազում էր երաժշտութիւնը: Մեծ ժողովուրդ էր հաւաքուած:

Կիրակի առաւօտեան տեղի ունեցաւ մեծ տօնի առթիւ գանձազան վայրերից Էջմիածին հաւաքուած պատգամաւորների խորհրդակցութիւն գարոցական խնդիրների առթիւ: Ընդունուեց կատարելապէս յաջող մի որոշում:

Մայր Տաճարում մատուցուած հանդիսաւոր պատարագից յետոյ մաղթանք կատարուեց Կաթողիկոսի և ամբողջ միաբանութեան մասնակցութեամբ: Այնուհետև ձեռնարկուած տեղի ունեցաւ գրական-երաժշտական ցերեկոյթ մեծ տօնին նուիրուած: Կաթողիկոսն ընդունեց պատգամաւորների շնորհաւորանքները, որից յետոյ տեղի ունեցաւ հանդիսաւոր ճաշ Կաթողիկոսի ներկայութեամբ: Աւաջարկուեցան Թագաւոր Կայսրի, Տէր Փոխարքայի, Կաթողիկոսի և այլ կենացներ և կարգացուցեցին ստացուած շնորհաւորական հեռագիրները:

Կաթողիկոսն ընդունեց Քիֆլիզի պատգամաւորներին:

Գարեզին վարդապետը բանաստեղծ հայ գրերի մասին:

Վանքը և ձեմարանը լուսալաւաւած էին: Նուազում էր երաժշտութիւնը:

ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹԻՖԼԻՉՈՒՄ

Եարաթ, հոկտեմբերի 12-ին, առաւօտեան ժամը 11-ից քաղաքում սկսեցին փակուել հայկական վաճառականական հիմնարկութիւնները համազգային մեծ տօնի առիթով:

Միաժամանակ հայ կրթական հաստատութիւններից աշակերտներն ու աշակերտուհիները իրենց հոգաբարձական ու սուսուցչական կազմերով սկսեցին հաւաքուել Վանքի գաւթում:

Գաւթի թէ մուտքը և թէ առաջնորդարանն ու Ղուկասեան թանգարանը զարդարուած էին դրօշակներով ժողովրդի հոծ բազմութիւնը, որ խռնուած էր թէ ասոր հարում և թէ գրում, հեղհեղէ աճում էր:

Ժամը 10 ից սկսուեց հանդիսաւոր պատարագը, որ մատուցանուած էր Աշոտ եպիսկոպոսը:

Պատարագին երգում էր երկսես քառաձայն խումբը Վ. Չիլիսաշտեանի ղեկավարութեամբ:

Պատարագի միջոցին օրվայ մեծ տօնի առիթով բաւական ուշադրաւ քարոզ խօսեց Աշոտ եպիսկոպոսը շեշտելով առհասարակ մեծ մարդկանց, հանճարների նշանա-

կութիւնն ու խաղացած դերը ժողովրդի վերածնութեան գործում: Մասնաւորապէս ու Մեսրոպին դառնալով, քարոզիչը համարեց նրան հայ ժողովրդի իմացականութեան ու կուլտուրական կենցիկի արգիւնքը, շեշտելով որ ու Մեսրոպի նման ստեղծագործները սուպ են գալիս դարերի ընթացքում ու անմահանում: Եր քարոզի վերջում սրբազանը օրհնեց ժողովրդին ու կոչ արեց գրական մասնակցութիւն ցոյց տալ ներկայ մեծ տօնի յաւերժացման գործին:

Տաճարը ծայրէ ի ծայր լի էր ժողովրդի խուսն բազմութեամբ: Պատարագից յետոյ սրբազան պատարագիչը շրջապատուած հոգեւորականութեամբ և թեմական առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի ուղեկցութեամբ դուրս եկաւ տաճարից ու բախում հանդիսաւոր հոգեհանգիստ կատարեց ու Մեսրոպի յիշատակին: Ետըջը օղակ կազմած շարքով կանգնած էին հայ գարոցների աշակերտները իրենց դաստիարակներով, հասարակական ու կուլտուրական հաստատութիւնների և վաճառականութեան ներկայացուցիչները, մամուլի ներկայացուցիչները, հայ գրականագէտները և այլն: Ներկայ էին նաև I տետրական գարոցի ու Մանթաշեան վաճառականական գարոցի ու մի քանի գիմնազիանների հայ աշակերտները, Մ. Վ. Արզութեան-Ներկայնարագուկի և Սմբատեանի պանսիանների սաները: Վերջինիս պանսիանի սաների բոլորի կրճքին բաւականին սրամտօրէն կայքրած էր մի-մի հայ տատ, այնպէս որ շարքով գնալիս՝ երեսանների շարանը ներկայացնում էր միաժամանակ ամբողջ այրուրէնը:

Մտաւորապէս ժամը 1-ին վերջացաւ հոգեհանգիստը, և ժողովուրդը տօնական տրամադրութեամբ սկսեց ցրուել: Ետտեղը առաջնորդարան մտան ու իրենց շնորհաւորութիւններն արտայայտեցին թեմիս առաջնորդին մեծ տօնի առիթով:

Կիրակի հոկտեմբերի 13-ին Քեղի ունեցաւ համագային Մեծ Յօրիկեանի հանդիսաւոր տօնախմբութիւնը: Առաւօտեան վաղ սկսեցին դօղանջիլ Վանքի աւազ եկեղեցու գանգերը ժողովուրդը քաղաքի պանազան կողմերից սկսեցին դիմել դէպի եկեղեցին: Վանքի բակի մուտքն ու առաջնորդարանի տափնանները դադարուած էին դրօշակներով: Վանքի դրանը և փողօցում ուստիկանութիւնը կարգ էր պահպանում և խանութից խուսափելու համար մէկ-մէկ էր ներս թողնում ժողովրդին: Ժամը 10 ին սկսուեց պատարագը. պատարագիչն էր Մեսրոպ եպիսկոպոսը: Երգում էր Վանքի աւազ եկեղեցու քառաձայն խումբը Վ. Չիլիսաշտեանի ղեկավարութեամբ: Պատարագին ներկայ էր մայրապետ Թայիրեանը 8 կոյտերով: Պատարագը վերջացաւ մօտ ժամը 12-ին: Բնեիկ վարդապետը քարոզ խօսեց կրօնի և գրիքի նշանակութեան մասին:

Ամբողջ պատարագի ժամանակ մի քանի հազար հօգուց բազկացած ժողովրդի խուսն բազմութիւնը սպասում էր բախում և փողօցում թափօրի սկսուելուն:

Պատարագից յետոյ մաղթանք կատարուեց Վանքի



բակում, որից յետոյ ժամը մօտ 12<sup>1</sup>/<sub>2</sub>-ին սկսուեց հանդիսաւոր թափօրը դէպի Երեսիսեան դպրոցը, մասնակցութեամբ թիֆլիզի հայ հասարակական և կուլտուրական հաստատութիւնների ներկայացուցիչների, հոգևորականութեան, ցարոցների հազարաքանութիւնների, ուսուցչական կազմերի և դպրոցների բարձր դասարանների աշակերտութեան:

Թափօրի առաջից դնում էին թիֆլիզի արհեստւորների աւագները համարական դրօշակներով, որոնք մի առանձին շուք էին տալիս թափօրին Բոլոր դրօշակները հայկական միատեսակ հագուստ էին կրում: Յետոյ գնում էր երգչակի խումբը, որին հետեւում էին կոյսերն ու հոգևորականութիւնը հանդերձաւորուած, ապա ամպհոված առկ թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը զգեստաւորուած Այոթ եպիսկոպոսի և Բենիկ վարդապետի ուղեկցութեամբ:

Թափօրը անցնելով Վանքի Կեմ փողոցով, Վերջնացոյի արձանի մօտով և Չիրքեզեան փողոցով դիմեց դէպի Երեսիսեան դպրոցը՝ երկսեռ ժողովրդի հսկայական բազմութիւն անգին տարածութեամբ հետեւում էր թափօրին Խանութեմ ժողովրդի մէջ քափկանութիւնը շղթայ կազմելով հաղի էր կարողանում կարգ պահպանել, մի քանի կանայք և տղաներ ոտի առկ ընկան Տրամվայի վագոնների երթևեկութիւնը թափօրի անցած փողոցներում կանգ էր առել: Տների պատուհանները ու պատշգամբները լցուած էին հանդիսատեսներով:

Թափօրը մօտ ժամը մէկին հասաւ Երեսիսեան դպրոց: Յանկապատի մուտքին ծաղիկներով ու ստեղծով յայտնական կամար էր շինուած, որի վրայ ոստերից հիւսած էին «1500—400» թուերը: Ենեցի շորքալորը ցանկապատի վրայ փողփողում էին հարիւրաւոր դրօշակներ: Համարութիւնների դրօշակակիրները շենքի մուտքի մօտ երկչաք շղթայ կազմեցին, որի միջոցով հանդիսաւոր թափօրը ներս մտաւ շենքը: Հաղարարը երկսեռ ընդունութիւնը շղթայատեց շենքը: Այնուհետև կարծով և աւտամօրիկներով սկսեցին գալ հրաւիրուած կառավարչական, հասարակական և կուլտուրական հաստատութիւնների ներկայացուցիչները: Ներս էին թողնում միայն հրաւիրուածները:

Հանդէսը զարդի գանդիճում սկսուեց ժամը 2-ին: Պատուաւոր հիւրերի թոււմ ներկայ էին Փոխարքայի օչնականների զենւելյաւ: Ետտիրով ամուսնու հետ և սենատոր Վասաղի, աստիկանագետ զենւելյաւը Զահրակին, Թիֆլիզի վրաց ուղեւականութեան պարագլուխ իլիւ Աշխարին, Թիֆլիզի քաղաքագլուխ Ա. Խաթիսեան, հայկաթողիկների ներկայացուցիչ Կ. Կոնստանտինով, սիւննիների մուֆթին, և յիաների շէյխուլ-իսլամը, հրէականների արքան և այլն:

Հանդէսը բացեց Թեմակալ առաջնորդ Մեսրոպը և պիլիպոսը մի ընդարձակ ճառով:

Այնուհետև խոսուեցան և կարգացուեցան Ծոնի առիթով ճառեր, ուղեգրներ և հեռագիրներ հայ և օտար բարձրաստիճան անձերի, հաստատութիւնների, ընկերու-

թիւնների և մամուլի ներկայացուցիչների կողմից: Յետոյ հրաւիրեալներին արուեց թէյ:

*Իրական Ինդագիտական Սալօնում*

Ուրբաթ, Կրական-Փեղագիտական Սալօնի հանդիսաւոր յօւր ֆիքսը ետիրում էր տասերի զիւար 1500 ամեակին և և պատգումութեան 400 ամեակին:

Տ. Կապարեանի խնդրանքով՝ Ա. Կապարեան Վաթողիկոսը թիլլոսարել է կարապետ եպիսկոպոսին, Գարեգին, Կէրոզ-Չէօրէքչեան և Թեոփոլ զիւնական վարդապետներին յատուկ այս երեկոյթի համար Էջմիածնից գալ թիֆլիզ և Սալօնի օտարազգի հիւրերին ծանօթացնել համազգային այս մեծ առնի նշանակութեան հետ:

Էջմիածնի միաբանութեան յիշեալ անդամները ճառատեսցին բացի ուսուցիչից և անգլիկէն, զերմաներէն, իտալերէն, յունարէն և Ֆրանսերէն: Հանդէսը բացեց Բենիկ վարդապետը տղոյնի ճառով: Եւ այդպիսով Սալօնի օտարազգի հիւրերը առիթ ունեցան ծանօթանալու Էջմիածնի միաբանութեան մի քանի յայտնի գէմքերի հետ:

Երաժշտական մասը՝ կատարուեց երգեցողութեան պրօֆ. Բրօքիի ղեկավարութեամբ:

Այս երեկոյթի համար հրաւիրուած էին Էջմիածնի զնացած բոլոր պատգամաւորները և մշտական հիւրերը:

**ՓՈՒՍԿԱՅԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ**

Կովկասի Փոխարքայ Կոստ Ի. Ի. Վորոնցով-Իրաչկովի գալուտեան առթիւ քաղաքը տօնական կերպարանք էր ստացել: Տների պատուհաններն ու պատշգամբները, խանութների դռները զարդարուած էին հազարաւոր մեծ ու փոքր դրօշակներով, ծաղիկներով ու թարմ ոստերով: Փոխարքայի պալատի առաջ կանգնեցրած էր յայտնական կամար:

Քաղաքի բոլոր պետական միջնակարգ, քաղաքային ծրական-եկեղեցական, հայոց և միւս ազգութիւնների դպրոցներում պարապմունքներ շկային: Գոյօլինակի պրօսպեկտը լցուած էր ժողովրդի մեծ ընդունութեամբ: Ժամը 3-ից յետոյ քաղաքին բոլոր դպրոցների աշակերտաշակերտուհիները ուսուցիչ ուսուցչուհիներով հանդերձ սկսեցին երկչաք կանգնել Փոխարքայի անցնելիք փողոցներում: Փոխարքայի պալատի առաջ կանգնեցրած յայտնական կամարի երկու կողմում կանգնած էին արհեստաւորների աւագները համարութեան դրօշակներով որոնց հետ միասին մեշյանների վարդապետն 10 դրօշակներ:

Կայարանի հրապարակը լցուած էր երկսեռ բազմութեամբ: Կայարանի մուտքը զարդարուած էր ոստերով և դրօշակներով: Կանգնած զգաւոր խումբը զայնուհետեւ Կնացքը մտնուեց հիշա Ժ. Ժամ և 58, քուլիկա:



կայարանում Նորին Պայծառափայլութեանը դիմաւորեցին.—Փոխարքայի պաշտօնակատար գեներալ Ն. Ծափլով, Փոխարքայի քաղաքացիական մասին օգնական սեւատոր Է. Վասաջի, ուղղափառ հոգևորականութիւնը, Վրաստանի էկզարխատի ժամանակաւոր կառավարիչ Բագուի առաջնորդ Գրիգորիյ կաթողիկոսի գլխաւորութեամբ, հայ հոգևորականութեան ներկայացուցիչները թեմիս առաջնորդ Մեսրոպ կաթ. գլխաւորութեամբ, միւս դաւանութիւնների հոգևորականութեան ներկայացուցիչները, Թիֆլիզի նահ. ազնւականութեան պարագլուխ իշխ. Ն. Արխազի, Թիֆլիզում գտնուող գաւառական միւս պարագլուխների հետ միասին, զինւորական և քաղաքացիական իշխանութիւնների և հաստատութիւնների առանձին մասերի կառավարիչներ և պալատական շքիչանի կանաչը:

Ճողովուրդը Փոխարքային դիմաւորեց անվերջանալի ուսաներով: Երջպատուած իր չքախմբով Փոխարքան բաց կառք նստելով դիմեց զէպի պալատ: Նա անցաւ Վոկզանայա, Ելիզաւետինսկայա, Միխայլովսկայա, Կիրոշնայա, Օլդինսկայա փողոցներով և Գելովինսկի պրօսպեկտով, երկշարք կանգնած դպրոցական աշակերտների միջով: Ճողովուրդը անվերջանալի ուսաներով ողջունում էր սիրած Փոխարքայի վերադարձը:

Նուազում էր զինւորական նուագախումբը: Տների պատուհաններն ու պատշգամբները լցուած էին հանդիսատեսներով:

Պալատի առջ Փոխարքային դիմաւորեցին քաղ. դուման և վարչութիւնը ամբողջ կազմերով, զանազականների, միշյանների և քաղաքի բոլոր հասարակական, կուլտուրական և ուսումնական հաստատութիւնների ներկայացուցիչներ: Քաղաքագլուխ Ա. Խատինեանը ողջոյնի խօսք ասեց քաղաքի կողմից և մատուցեց Փոխարքային ազ ու հաց, իսկ կոմսուհի Վօրոնցովա-Գաչկովային— ծաղկեփունջ: Բազմաթիւ ուսանների տակ Փոխարքան ամուսնու հետ քարձրաստիճան անձերի ուղեկցութեամբ մտաւ պալատ: Երեկոյեան շքեղ լուսավառութիւն կար:

**ԷՋՄԻԱԾՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ**  
(Քաղուած «Արարատի» № 8—9-ից)

Կոնդակ Կ. Պօլիի հայոց պատրիարքի անունով, որով տառերի զուտի 1500-ամեայ և հայ ապագրութեան 400-ամեայ Մեծ Եօրիկեանի առիթով յանձնարարուեց դպրոցական դրամագլխի հիմք դնել Ազգային Ճողովի հսկանաւորութեան ներքոյ:

Կոնդակ հանգուցեայ Սարգիս Խոճեանի կտակակատարների անունով, որով յանձնարարուեց փոխադրել հանգուցեայի կտակագումարը Նորին Սրբութեան անունով Սինօզի գանձարանում պահելու և տակոսները կկե-

ղեցական-ծխական դպրոցների օգտին գործադրելու համար:

Կոնդակ պ.պ. Պօղոս, Արշակ, Բսկոր և Արրահամ Ղուկասեանների անունով, որով հաստատուեց Եւչում բացուելիք «Մարիամեան-Ղուկասեան» օրիորդաց դպրոցի՝ նրանց ուղարկած կանանները:

Կոնդակ Ղարաբաղի թեմական հոգևոր գաղանցի հոգաբարձութեան և թեմի հայ ժողովրդի անունով՝ բարեգործ պ. Բաղդասար Արզումանեանի նոյն դպրոցի օգտին նուիրարեւած 200.000 ռ. դրամագլխի մասին:

Կոնդակ օրհնութեան և զոհուեակութեան պ. Միքայէլ Արամեանի անունով՝ Եւչում գտնուած իր սեփական տունը Ղարաբաղի թեմական դպրոցի օգտին նուիրարեւելու համար:

**ԲԱԿՈՒԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ**

Միքանի օր առաջ տեղիս ծխականներից մի ժողով էր կազմուած Մարդասիրական Ընկ. չէնքի զահլինում, ուր սխիտի քննուէր Բագուի գործակալութեան հարցը:

Խնդիրը լինելով խիստ փափուկ և պատասխանատու, արժանապատիւ հայր Եղիշէ Գեղամեանը, որը շատ քաջ ծանօթ է գործակալական պատասխանատու պաշտօնին և երկար տարիներ պաշտօնավարել է այդ պաշտօնում, «Բագուի Չայն» լրագրի մէջ նախօրօք մի յօդուած էր գետեղել, որի մէջ աշխատել էր ազացուցել, թէ որքան պատասխանատու է այդ պաշտօնը Բագուի համար: Հայր Եղիշէն Բագուի համար գործակալութիւնը աննշան համարելով՝ ցանկութիւն էր յայտնել և առաջարկել այդ յօդուածում, որ Բագուում յաջորդութիւն սահմանուի կայն:

Մեր նպատակը չէ այդ յօդուածի մասին խօսել, այլ մեր նպատակն է լուսնի նման պատկերացնել «Լոփտի» ընթերցողների առաջ և ցոյց տալ հոգևոր քարձր իշխանութեան անտարբերութիւնը և մի խումբ ծխականների հակաէջմիածնական քայքայիչ գործունէութեան ծրագիրը, որով աննկատելի կերպով, աստիճանաբար աշխատում են ազդեցութիւն ձեռք բերել հոգ. իշխ. ստեանի, կեկեցեցու և այլ գործերի մէջ և իշխանութիւնը կենդրոնացնել իրենց—այդ մի խումբ բաղադրանքների ձեռքում, նսեմացնելով էջմիածնին, Կաթողիկոսին և իշխանութիւնը:

Բագուի գործակալութիւնը շարունակ գտնուելիս է եղել ծխական այս կամ այն քահանայի ձեռքին, բայց հանգուցեայ Խրիմեանի օրով, երբ նկատուեց, որ Բագուն սովորական գործակալութիւնը չէ և չի կարելի գաւառական քաղաքների գործակալական արշինով շափել, կարգադրեց մի կոնդակով, որ նախ՝ գործակալը սօճիկ



ստանայ և ապա կուսակցուն նշանակեց.

Ի՞նչ էր Խրիմեանի նպատակը, Հանգուցեայր շատ լաւ գիտէր, որ բազմահազար հայեր պարուճակող Բազուն 4—5 գիւղ չէր, որ մի գործակալով ԵՍՄԱ գնար, այլ թեմի աչքն է, կապուած ոչ միայն Ռուսաստանի բոլոր թեմերի հետ, այլև Տանկաստանի, Պարսկաստանի և արտասահմանի հոգեոր իշխանութիւնների հետ, որովհետև աշխարհի երեսին ապրող բոլոր վայրերի հայութիւնից բնակիչներ կան: Նա՛ հանգուցեայ կաթողիկոսը շատ լաւ գիտէր, որ Բազունի քահանաները, որոնք իբրև ծխատէր՝ առաւօտները կը հրաւիրուեն ծխականներին, կը հրաւիրուեն ժամը 10-ին, 12-ին, 3-ին, կէս գիշերին և այլն, հետևաբար պաշտօնապէս չեն կարող պատշաճ ժամերին ներկայ գտնուել գործակալական գրասենեակում: Իսկ գործակալութեան հետ պաշտօնապէս կապուած պետական զանազան հիմնարկութիւններ (գինուորական, դատաստանական և այլն), որոնց ներկայացուցիչները գործակալին այցելելու ժամանակ բացի ժամկոչից ուրիշ չէին պատահում, իսկ զորք ունեցող հայերը ամբողջ մի շաբաթ փնտրելուց յետոյ հազու էին գտնոււմ գործակալին: Սակայն վարդապետ նշանակելով ատենաճար սովորական պարապմունքների ժամանակ բաց կը լինի, գործակալը միշտ ներկայ և գործերն էլ կ'անոնաւոր կընթանան: Գործակալ վարդապետը, մանաւանդ եթէ նա բարձր կրթութիւն ստացած լինի, կուսովարութեան առաջ կը նախադի Բազունի հայերի ներկայացուցիչը և կույտուրական պարոցական գործերի քննիչ-հսկիչը: Եւ եթէ Խրիմեանը իր կաթողիկոսութեան օրերում երկու գործ կատարած լինի՝ մէկը այն կոնդակն է, որով Բազուն կուսակցուն գործակալի հաստատելն է այն էլ ուճկով:

Այդ ծխական ժողովին ներկայ էին 46 ծխականներ, որոնց մէջ կային մի շարք ուսուցիչներ և հոգաբարձուներ: Ժողովը պիտի քննէր՝ հարկատր է գործակալին ոոճիկ նշանակել թէ ոչ. իսկ եթէ հարկատր է նւ անհրաժեշտ—Բազունի եկեղեցիները չպիտի տան այդ ոոճիկը: Ժողովը 28 ձայնով ընդգէմ 18-ի մերժեց Բազունի եկեղեցիներից ուճիկ տալ: Այդ քանով էլ հարցը փակուեց և ահա այդ օրերը բարձրապահի Արտակ վարդապետը, որը կաթողիկոսի հրամանով գործակալ էր նշանակուած վերջին ամիսներու, 28 ծխականի հրամանով իր փաստաբուսան պիտի հաւաքէ ու հանապարհուի Էջմիածին: Թեմիս միւս քաղաքները աղքատ են, հապի են կարողանում իրենց եկամուտով տեղական անհրաժեշտ ծախքերը ծածկել, իսկ Բազուն հարուստ է և հնարաւորութիւն ունի գործակալին ուճիկ տալու 28 ծխականները պնդում են, որ մենակ Բազուն չպիտի տայ ուճիկը, այլ թեմի միւս քաղաքներն էլ: Սյսիւքն Ղուբան, Գէօկչայր, Շամախին, Իերբանդը և այլն, որոնց եկեղեցիները կարիքէ մէջ են և իրենց ժամկոչների ուճիկները հապի են ծածկում, իսկ Բազուն ոչ միայն հարուստ է, այլ Բազունի գործակալութիւնը, ինչպէս ասացի, որքան Շամախու, Ղուբայի կամ Իերբանդի հետ է կապուած, տասն անգամ աւելի կապուած է Շուշու,

Ջանդեղուրի և այլ քաղաքների հետ, հետևաբար՝ ըստ 28 ծխականների՝ մի գործակալին ուճիկ տալու համար երկրագնդի հայերից պիտի փող հանգանակել...

Անցնենք բուն խնդրին: 28 ծխականները ժողուում որոշում են գնալ Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակով արձակած հրամանի դէմ...

Մի հրաման, որ կոնդակով է արձակոււմ, հրամանը կոնդակով էլ պիտի վերացուի:

Եթէ այդ ժողովը օրինաւոր նախաձեռն և Բազունի գործակալ վարդապետը յետ գնայ, Բազուն իր եկեղեցիներից ուճիկը չվճարէ, հապա ինչ արժէք ունի կաթողիկոսների կոնդակը:

Կարող է պատահել, որ մի այլ ժողովում ընդէմ 28 ձայնի 30 ձայնով գործակալի ուճիկը որոշուի տալ Բազունի եկեղեցիներից, սակայն այստեղ ձայների մեծամասնութեան մասին չէ խօսոււմ, այլ սկզբունքի:

Այստեղ չէ շօշուփոււմ Հայաստանի եկեղեցւոյ սրբազործուած ծխականատարութեան, հիմնական օրէնքների փոփոխման հարցը, որը կարող լինի փոքրէլ հայութեան հիմքը, և կարիք լինի ծխական ժողովների, այլ բարեկարգման խնդիր է և ծխականները իրաւունք չունեն այդպիսի հարցերում դէմ գնալ Ամենայն Հայոց Հայրապետի հրամանին: Այլ էր, եթէ այդ հրամանը լինէր թեմական իշխանութիւնից, որին կարելի էր յանձնել ծխական ժողովի քննութեան, իսկ այստեղ քուէարկոււմ է կաթողիկոսի հրամանը...

Տեսնենք Էջմիածինը թնչ կանէ: Թ. Ա. Բազուն, 6 հոկտ.

ՇՈՒՇՈՒ ԳԱԻԱՌԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ

Այս տարուայ ամառային ամիսները—յունիս, յուլիս, օգոստոս—են սախոււած էի անցկացնել Ղարաբաղի մի քանի գիւղերում, գործիքնակ՝ Գաչրաւաղ, Ղչլաղ-գիւղ, Սէյրիդէն, Ռէվ կայն, ուր Նոր մետաքսի գործարաններ (шелководальные фабрики) են կառուցուել խողակ շիրմայ (шелководные коконы) մաքրելու համար:

Այդ գործարաններում գլխաւորապէս աշխատում են գիւղերի աղքատ հայ աղջկերքը, չափահաս և անչափահաս 10—20 տարեկան և սակաւ կանայք գեղջկուհիներ: Գործը ըստինքեան բաւական դժուար է. բնակարանները, ուր աշխատում են խեղճ կանայք ու երեխայք, չափազանց տաք է, վառարանները միշտ վառուած, եփում են բոժոժը (жюканы), իրենք քրտնած սախ մինչև գլուխ: Այսպէս նեղութեամբ գործում են օրը 15—16 ժամ, այն է առաւօտեան ժամը 4-ից սկսած մինչև կէսօր ժամը 12 ը. ժամը 12-ին արձակոււմ են նաչելու և հանգստանալու ընդամենը 45 բուպէ ժամանակով. ժամը 12-ից 45 բուպէ անց ժողովուում են և շարունակում իրենց գործը մինչև ժամը 8 ը: Այդ կարճ ժամանակամիջցում խեղճերը երկի չեն էլ կարողանում հաչը վերջացնել, էլ սրտեկից կարող